Հավելված
ՀՀ վարչապետի 2010 թ.
մայիսի 11 -ի N 327 -Ա
որոշման

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ՏՐՎՈՂ

1. Եվրասիական զարգացման բանկի խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչին՝

1) Եվրասիական զարգացման բանկի կազմում նոր մասնակցի ընդունման և նրա ընդունման պայմանների սահմանման հարցի կապակցությամբ քվեարկել՝ Ղրղզստանի Հանրապետությանը բանկի մասնակիցների կազմում ընդունելու օգտին, ավելացնելով Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալը, լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման եղանակով՝ Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալում վերջինիս անդամավճարի մեծության չափով.

2) Եվրասիական զարգացման բանկի մասնակիցների կազմում Ղրղզստանի Հանրապետության ընդունմամբ պայմանավորված բանկի կանոնադրական կապիտալի ավելացման հարցի կապակցությամբ քվեարկել՝ Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալի ավելացման օգտին, լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման եղանակով՝ բանկի կանոնադրական կապիտալում վերջինիս անդամավճարի մեծության չափով.

3) Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված բանկի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու հարցի կապակցությամբ քվեարկել՝ Եվրասիական զարգացման բանկի կանոնադրության մեջ բանկի կանոնադրական կապիտալի մեծության մասով փոփոխություն կատարելու հարցի օգտին՝ Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման համաձայնագրին Ղրղզստանի Հանրապետության միանալու և վերջինիս կողմից ձեռք բերվող՝ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարման արդյունքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ